

13467



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«06» 12 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 268 - 24

Նախաձեռնող՝

«Կապիտալ դիզայն» ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 32 շ.

Գործունեությունը՝

Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի
կրթահամալիրի կառուցում
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 268 - 24

«06» զեկտեմբերի 2024թ.

Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Կապիտալ դիզայն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մադինա բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Կապիտալ դիզայն» ՍՊԸ կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում նախատեսվում է կրթահամալիրի (144 աշակերտի համար դպրոց և 40 երեխայի համար նախակրթարան) կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Մարտունի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. հունիսի 21-ի N 191 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 05-062-0020-0007) պետական սեփականություն հանդիսացող և «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մադինա գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրված 1.1 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների օրագրի շրջանակներում:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական տարածքում: Տարածքը կառուցապատված է, տարածքում առկա են՝ 1437,2 քմ. 2679,6 քմ.,



3,379,4 քմ մակերեսներով դպրոցի մասնաշենքերը, կաթսայատունը և պահեստի շենքը (յուրաքանչյուրը՝ 63 քմ): Նշված բոլոր կառույցները քանդվելու են:

Կից գտնվում են ներհամայնքային նշանակության ճանապարհներ, բնակելի տներ, տնամերձ հողամասեր:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 2200 մ բարձրության վրա՝ Արմաղան լեռան արևելյան ստորոտին, Արգիճի գետի ձախ ափին: Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 4 շերտով: Հողի բերրի շերտը տատանվում է 0.0-0.2 մ սահմաններում:

Տեղամասում մինչև 10.0 մ փորված հորատանցքերում գրունտային ջրեր չեն բացահայտվել և, ըստ ֆոնդային տվյալների, գտնվում են խորը հորիզոններում: Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, բացակայում են: ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,3g$:

Մարտունի համայնքի տարածքը մտնում է ցուրտ ձմեռով և զով ամառով կլիմայական գոտու մեջ:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես - 1.1 հա (100 %),
- կառուցապատման մակերես - 1999.10 մ² (15.47 %),
- շենքերի ընդհանուր մակերես - 3278, 73 մ²,
- կրթահամալիրի ընդհանուր մակերես - 3264.43 մ²,
- կրթահամալիրի օգտակար մակերես - 2892.73 մ²,
- կրթահամալիրը զրոյական նիշում - 1890.40 մ²,
- շինարարական ծավալը - 15368.39 խմ,
- ասֆալտապատ մակերես - 2762.00 մ²,
- բազալտ ջարդոնից մայթերի մակերես - 660.00 մ²,
- կանաչապատման մակերես - 5698 մ² (51.80%),
- բաց սպորտհրապարակ - 540.00 մ²,
- մանկական խաղահրապարակներ - 500 մ²,
- ավտոկայանատեղի - 5 մեքենա:

Նախատեսվում է կառուցել 144 աշակերտի և 40 մանկապարտեզի սաների համար կրթահամալիր՝ տիպարային նախագծի հիման վրա տեղակապման միջոցով

Դպրոցի բակային տարածքում նախատեսվում է բաց խաղադաշտ՝ արհեստական խոտածածկով կամ բետոնե հիմքով միաձույլ ռետինե ծածկույթով, ցանկապատված, գծանշումով, ֆուտբոլի դարպասներով, առանձնացված արտաքին լուսավորությամբ: Հնարավորության դեպքում նախատեսվելու է 100-150 նստատեղով տրիբունա (մետաղական հիմնակմախքի վրա, պլաստիկ նստարաններով):

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ և մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ: Իրականացվելու է ներբակային կահավորում, տեղադրվելու են նստարաններ, աղբամաններ և այլն:



Կրթահամալիրի տարածքում նախատեսվող ջերմոցն իրենից ներկայացնում է 32 քմ տարածք զբաղեցնող կառույց, որն օգտագործվելու է դպրոցում կենսաբանության կամ այլ բնագիտական առարկաների գործնական դասընթացների համար:

Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն, ջերմամատակարարումը իրականացվելու է բնական գազով:

Տեղադրվելու է 97 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան՝ կազմված 176 հատ վահանակներից: 32 կտ-ը տեղադրվելու է կրթահամալիրի տանիքին: Գետնին տեղակայված ֆոտովոլտային վահանակների վնասվածքներից պաշտպանության նկատառումներից ելնելով՝ նախատեսվում է դրանց տարածքը սահմանազատել մետաղական ցանկապատով, տեղադրել մուտքի դարպաս: Զբաղեցրած մակերեսը՝ 1720.0 քմ: Սահմանազատված տարածքում է տեղակայվելու նաև 400 կՎԱ հզորությամբ էլ. ենթակայանը:

Ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Հաշվի առնելով, որ բնակավայրում առկա չէ կոյուղու ցանց՝ տեղադրվելու է «Ցիկլոն 10» 3 վրկ արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան: Կայանն իրենից ներկայացնում է աերոբ-անօքսիդ ակտիվ տիղմի կոնցենտրացիայի ավտոմատ կարգավորմամբ և տիղմի մնացորդների կայունացմամբ համակարգ:

Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն ապահովելու նպատակով նախատեսվել են միջոցառումներ՝ շենքի արտաքին պատերը երեսապատվելու են սրբատաշ ֆայբերցեմենտային սալիկներով՝ պահպանելով հրակայուն, ոչ ջրաթափանց և հողմաջրապաշտպան, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը, կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ՝ օդային միջնաշերտով, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից, շենքերի միջտարածքային ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով, լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:

Կրթահամալիրն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:


Շենքը ներառյալ ստորգետնյա հարկերը (թաքսոոց) ապահովված են լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով, էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտաձման համակարգերով, ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Շինարարական աշխատանքները տևելու են 540 օր, ապամոնտաժման աշխատանքների տևողությունը գնահատվել է 7 ամիս:

Շինարարական մեքենաներից և մեխանիզմներից օգտագործվելու են բուլդոզեր, թրթուրավոր կռունկ, թրթուրավոր էքսկավատոր, կողավոր ավտոմեքենա, ավոինքնաթափ, եռակցման ապարատ, հետհար մուրճ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսապատման



Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է տարածքի կանաչապատում՝ ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան՝ համաձայնեցված Մարտունի համայնքապետարանի հետ:

Իրականացվելու է 5698.0 մ² (51,80 %) մակերեսով կանաչապատում՝ ծառատնկման և սիզամարգերի միջոցով: ՏՀՀ համապատասխան մասնագետների կողմից կատարված ուսումնասիրության համաձայն և բնակավայրի վարչական ղեկավարի հետ քննարկումների արդյունքում՝ դպրոցի բուն տարածքում առկա 35 բարդիները հատվելու են (նշված ծառերը տնկվել են ավելի քան հիսուն տարի առաջ, գտնվում են անմխիթար վիճակում և վտանգ են ներկայացնում ուժեղ քամիների և ուժգին անձրևների ժամանակ): Հատված յուրաքանչյուր ծառի փախարեն կտնկվի տարածքին և բնակլիմայական պայմաններին համապատասխան երկու նոր ծառ:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ կաթիլային եղանակով, օգտագործվելու է նաև նախատեսվող մաքրման կայանից դուրս եկող ջուրը:

Կրթահամալիրի տարածքում տեղադրվելու է 2 հատ 50 մ³ տարողությամբ ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով:

Շինարարության ընթացքում համապատասխան միջոցառումների պահպանմամբ ապահովվելու է երեխաների անվտանգությունը, աղմուկի մակարդակի թույլատրելի նորմերը դասապատրաստմանը չխանգարելու համար:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ: ՀՏՀՀ-ի կողմից կանոնավոր իրականացվող մոնիթորինգի արդյունքները գրանցվելու են Ծրագրի շրջանակում մշակված մոնիթորինգի ստուգաթերթիկում:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար գումարային արժեքը գնահատվել է մոտ 300,000 հազ ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Համաձայն Հաշվետվության՝ կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Գեղարքունիքի մարզպետարանը, Մարտունու համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մարտունի համայնքի Մադինա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է երկու հանրային լսում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:



Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
3. Թափոնների, այդ թվում քանդման աշխատանքների արդյունքում առաջացող թափոնների, ներառյալ վտանգավոր թափոնների կուտակումը, հեռացման ձևը, եղանակը, ինչպես նաև կազմակերպված սանիտարական աղբավայրում տեղադրումն իրականացնել համապատասխան ՀՀ գործող իրավական ակտերի և իրավասու մարմնի հետ համաձայնեցված:
4. Ծառահատման, կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայնեցված ՏԻՄ-ի հետ՝ ապահովելով Հաշվետվությամբ ամրագրված կանաչապատման լուծումները:
5. Աշխատանքային նախագիծը ներկայացնել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ տեխնիկական անվտանգության փորձաքննության՝ արտադրական վտանգավոր օբյեկտների (կաթսայատուն, վերելակ և այլն) կառուցումը իրականացնելու դեպքում:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒ ՄԱՍ

«Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան